



ԵՐԿՈՒՇԱՐԹԻ, 29 ՍԵՊՏԵՄԲԵՐ, 2025

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն պարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալս յիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՇԱՐԱԿԱՆ

**Մեծ ու զարմանալի էս Քո գործերը, Ամենակալ Տէր Աստուած մեր,
Արդար ու ճշմարիտ էս ճամբաներդ, Ամենակալ Տէր Աստուած մեր:
Տէր, ո՞վ չի վախենում Քեզնից, Ո՞վ է, որ չի փառավորում Քեզ,
Քանի որ Դուն ես միայն սուրբ, Միայն սուրբ: (3)**

ԱՊՈԹՔ

Ով երկնաւոր Հայր, Քու սէրդ անսահման է եւ Քու հաւատարմութիւնը կը հասնի ամպերէն անդին: Դուն անփոփոխ ես: Քու ներկայութիւնդ՝ անշեղ եւ Քու զօրութիւնդ անսահման: Կը փառաբանենք Քեզ Քու անսպառ սիրոյդ եւ հաւատարմութեանդ համար, որ կը հոգաս ու կը խնամես մեզ: Շնորհակալութեամբ կը փառաւորենք Քեզ, Որդիին եւ Սուրբ Հոգիին հետ միասին, յաւիտեանս. ամէն:

ՇԱՐԱԿԱՆ - ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾ

Սուրբ Աստուած, սուրբ եւ հզօր, սուրբ եւ անմահ, որ յայտնեցար վասն մեր, ողորմեա մեզ:

Փրկել զմեզ ի փորձութենէ եւ յամենայն վրանգից մերոց: Եւ եւս խաղաղութեան գՏէր աղաչեսցուք: Վասն լսելի լինելոյ Տեառն Աստուծոյ ձայնի աղաչանաց մերոց՝ բարե-խօսութեամբ սուրբ Աստուածածնին, եւ իջանելոյ ի վերայ մեր ողորմութեան եւ գթութեան Տեառն Աստուծոյ: Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո՛ւ եւ ողորմեա:

ՇԱՐԱԿԱՆ - ԱՊՈԹՔ

**Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենասուրբ Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւեն ես նեղելոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:**

Քու սիրոյդ պարգեւները պիտի երգեմ, Տէր, յաւիտեան.
 հաւատարմութիւնդ պիտի պատմեմ գալիք բոլոր սերունդներուն:
 Գիտեմ թէ սէրդ յաւիտեան է,
 հաւատարմութիւնդ՝ երկինքին պէս հաստատուն:
 Ըսիր՝ "Իմ ընտրեալիս հետ ուխտ մը կնքեցի,
 երդում ըրի Դաւիթին, իմ ծառայիս, ըսելով.-
 "Քու սերունդդ յաւիտեան պիտի թագաւորէ,
 սերունդէ սերունդ պիտի ամրապնդեմ աթոռդ":
 Երկինքը սփռնչելիքներդ կը գովերգէ, Տէր,
 սուրբերու հաւաքոյթը քու հաւատարմութիւնդ կը գովերգէ:
 Որովհետեւ, Տէր, երկինքի մէջ ով կայ քեզի հաւասար,
 երկնային էակներէն ո՞վ կը նմանի քեզի:
 Ատեանիդ մէջ կանգնող սուրբերը կը զարհուրին Աստուծոյդ
 փառքէն,
 քեզ շրջապատողները կը սարսափին մեծութենէդ:
 Ով Տէր, Աստուած Ամենակալ, ո՞վ կայ քեզի պէս հզօր,
 դուն՝ որ բոլոր գործերուդ մէջ հաւատարիմ ես, ով Տէր:
 Դուն կը տիրես փոթորկող ծովուն վրայ,
 եւ անոր խոռված ալիքները դուն կը հանդարտեցնես:
 Դուն ճգմեցիր ու ոչնչացուցիր Ռահաբ վիշապը,
 քու զօրաւոր բազուկովդ ցրուեցիր թշնամիներդ:
 Քուկդ են երկինքը եւ երկիրը,
 աշխարհը իր ամբողջութեամբ դուն հաստատեցիր:
 Հիւսիսն ու հարաւը դուն ստեղծեցիր,
 Թաքոր ու Հերմոն լեռները ցնծութեամբ կ'երգեն քու անունդ լսելով:
 Զօրեղ է քու բազուկդ, զօրաւոր է քու ձեռքդ, եւ անյաղթելի՝ քու աջդ:
 Արդարութեան եւ իրաւունքի վրայ հիմնուած է աթոռդ,
 սիրոյ եւ հաւատարմութեան արտայայտութիւն են բոլոր գործերդ:
 Երանի այն ժողովուրդին, որ գիտէ օրհնութիւն երգել քեզի, Տէր,
 եւ քու ներկայութեանդ լոյսով կ'առաջնորդուի.
 որ անունովդ կ'ուրախանայ ամէն օր,
 կը փառաբանէ քեզ՝ արդարութեանդ համար:
 Որովհետեւ դուն ես մեր պարծանքն ու զօրութիւնը,
 քու հանութեամբդ է որ յաղթանակ կու տաս մեզի:
 Մեր պաշտպանը դուն ես, ով Տէր,
 դուն ես մեր Թագաւորը, դուն՝ Սուրբ Աստուածը քու ժողովուրդիդ:

ՕՐՀՆԵՐԳ ԱԶԳԱՅԻՆ ԱՂԷՏԻ ՊԱՀՈՒՆ 89:1-18

Հեղափոխական, երեւի քիչ մըն ալ քարոտինակ, վերնագիր մը քրտած է մեր այսօրուան Սաղմոսին, 89-րդ: Որովհետեւ երբ կարդանք պիտի տեսնենք, որ առաջին բաժինը աղէտի մասին խօսք մը չկայ: Նկարի ունեւնալով, որ այսօրուան այս Սաղմոսը երկարապատում Սաղմոս մըն է, ուստի պիտի փորձենք բաժին բաժին սեր-տել: Սաղմոսը հիմնականին 4 մասերէ բաղկացած է: Հեղինակը Էթան անունով անձնաւորութիւն մը, Դաւիթ թա-գաւորի օրերուն Վկայութեան Խորանին երգի եւ երաժշտութեան պարասխանապատմութիւն մէկն էր, ինչպէս նաեւ իր ժամանակի անուանի իմաստուններէն: Խորքին մէջ երբ Սաղմոսը ամբողջութեամբ նկարի ունենանք, ապա պիտի տեսնենք որ իրօք աղէտի պահուն խնդրանքը մըն է որ կ'ընէ, սակայն նախ քան խնդրանքը, զԱստուած փառաբանելու, Աստուծոյ սուրբ անունը գովերգելու բաժնով կը սկսի: Յիշեցում մըն է, նաեւ այսօր մեզի: Մենք ալ նեղութեան եւ դժուարութեան պահուն Աստուծոյ կը դիմենք, բայց նախքան այդ դիմում կարարելը, առաջին այս բաժինը, անհրաժեշտ ու կարեւոր բաժին մըն է, այնպէս ինչպէս Տէրունական աղօթքի պարագային: Այլ խօսքով, դիմողը մտքին մէջ յարակ գիտէ կամ պէտք է գիտնայ, թէ որո՞ւ է որ կը դիմէ: Որովհետեւ անով պայմանաւորուած է նաեւ մեր դիմումը:

Նախ կը ներկայացնէ, թէ սիրոյ պարգեւներ վայելած է Աստուծմէ, այն Աստուծմէն որ յաւիտենական է, եւ ան բոլոր սերունդներուն պիտի պարմէ այդ սիրոյ մասին, մանաւանդ երբ այդ սերն ալ Աստուծոյ նման յաւիտեան է: Մեր մը որ ժամանակին հետ կապ չունի, ժամանակին հետ չի փոխուիր: Մեր պարագային մը սերը նաեւ պայ-մանաւորուած է ժամանակով, կացութեամբ, եւ այլ ուրիշ տուեալներով: Սա կը յիշեցնէ, թէ Աստուծոյ սերը յաւիտեան է, այդ սերը փոփոխական չէ, ընդհակառակը մենք ենք փոփոխականը: Երկրորդ, Աստուծոյ հաւաքարմու-թիւնը հասարակութիւն է: Ահա Սաղմոսներգուն կը սկսի յիշելու անցեալի այն խոսքով որ Աստուած ըրաւ եւ այն ուխտը որ Աստուած կնքեց Իր ծառային Դաւիթին հետ: Սաղմոսներգուն կը ներկայացնէ թէ ինչպէս երկինքը Աստուծոյ սքանչելի գործերուն գովերգը կ'ընէ, այնպէս ինչպէս մէկ այլ ուրիշ տեղ կ'ըսուի, երկինքն ու երկիրը քու փառքդ կը պարմեն: Իսկ սուրբերու հաւաքոյթը Աստուծոյ հաւաքարմութիւնը կը գովերգէ: 6-րդ համարը հեղա-փոխական է եւ յիշեցում այն դէպքին, որ տեղի ունեցաւ երկինքի մէջ: "Երկինքի մէջ ո՞վ կայ քեզի հաւասար, երկնային էակներէն ո՞վ կը նմանի քեզի": Այս տողերը կը յիշեցնեն Եսայի մարգարէութեան 14-րդ գլուխը, Արուս-եակին սրտին մէջ, Բարձրեալին պիտի նմանի, ու Անոր տեղը գրաւէ: Բայց ընդհակառակը, Աստուծոյ Արեանին մէջ կանգնող սուրբերը կը զարհուրին Աստուծոյ փառքէն: Սաղմոսներգուն կը շարունակէ ներկայացնելով Աստու-ծոյ զօրութիւնը, Անոր փիրութիւնը նոյնիսկ փոթորկող ծովուն եւ խռոված ալիքներուն, որ կը հանդարտեցնէ: Ան նաեւ կը յիշէ, թէ ինչպէս ոչնչացուց Ռահաբ վիշապը եւ թշնամիները ցիրուցան ըրաւ: Երկինքն ու երկիրը ամբողջ-ջութեամբ Աստուծոյ կը պարկանի: Անյաղթելի է Ան: Աստուծոյ բոլոր գործերը սիրոյ եւ հաւաքարմութեան ար-քայայտութիւն են: Ի վերջոյ, երանի կու տայ այն ժողովուրդին, որ գիտէ օրհնութիւն երգել Աստուծոյ, եւ Անոր ներկայութեան լոյսովը կ'առաջնորդուի, ու ամէն օր Աստուծոյ անունով կ'ուրախանայ: Իսկ վերջին բաժնով, կը դաւանի որ Աստուած է իրենց պարծանքը, զօրութիւնը, հաճութեամբ յաղթանակ պարգեւողը: Ժողովուրդին պաշտպանը, Թագաւորը եւ Սուրբը:

**Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:**